ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Տնօրեն՝ -------------------------------

«01» ----09-----------2022թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«Երևանի Հովհաննես Պողոսյանի անվան հ. 82 հիմնակա նդպրոց» ՊՈԱԿ

IIգ դասարան

ուսումնական հաստատության անվանումը , դասարան

Գրիգորյան Ստելա Լյովայի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

« 2022- 2023 » ուսումնական տարի

***Կրթական-դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները***

***Ներածություն(դասարանի ընդհանուր բնութագիրը)***

IIգ դասարանը բաղկացած է 25 աշակերտից: Դասարանում տիրում է համերաշխ մթնոլորտ: Աշակերտներն ակտիվ են, ուշադիր, հետևում են դասարանի մաքրությանը, հոգատար են միմյանց նկատմամբ:

***Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները***

***Հայեցի դաստիարակություն***

***Հոգևոր դաստիարակություն*** *խնդիրները՝*

*Դպրոցը երեխայի համար ոչ միայն գիտելիք ստանալու հաստատություն է, այլ հոգևոր դաստիարակության կենտրոն: Հայ երեխայի հոգևոր զարգացման գործում անփոխարինելի է քրիստոնեական դաստիարակությունը: Սովորողը պետք է ծանոթ լինի աստվածաշնչյան պատվիրաններին, որոնք պատգամում են լինել բարի, արդար, սիրել մերձավորին, չլինել անտարբեր և նյութապաշտ:*
*Նախատեսված է այցելություն Օշական՝ Մեսրոպ Մաշտոց եկեղեցի:*

***Գեղագիտական դաստիարակություն*** *խնդիրները՝*

*Գեղագիտական դաստիարակության համակարգում կարևոր դեր են խաղում ճանապարհորդությունները դեպի գեղեցիկի աշխարհ: Էքսկուրսիաներն ու դիտումները, բնության երևույթների վերլուծումը կարևոր են սովորողի համար: Նախատեսված է այցելություն թանգարան, համերգասրահ:*

***Ռազմահայրենասիրական դաստիարակություն*** *խնդիրները՝*

Սովորողների մեջ ձևավորել հայրենասիրություն: Սերմանել սեր և պատասխանատվություն հայրենիքի նկատմամբ: Ուսուցանել ռազմահայրենասիրական երգեր, զրուցել լեգենդար հերոսներից, քաջարի մարտիկներից՝ արժևորելով նրանց գործը:

***Ֆիզիկական դաստիարակություն*** *խնդիրները՝*

*Ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում, վնասակար սովորությունների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում:*

Կազմակերպել ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ՝մրցույթներ,օլիմպիադաներ:

Անընդհատ հետևել աշակերտների կեցվածքին՝նստելիս,գրելիս, քայլելիս: Դասապրոցեսին կազմակերպել ֆիզկուլտդադարներ:

***Աշխատանքային դաստիարակություն*** *խնդիրները՝*

*Աշխատանքային հմտությունների և կառուցողական վերաբերմունքի խթանում:*

Աշխատանքային դաստիարակությունն ամենից առաջ սիրո դաստիարակությունն է աշխատանքի նկատմամբ: աշխատանքը կարող է դառնալ բերկրանքի աղբյուր, երբ սովորողը նրանում տեսնի ինչ-որ նշանակալից բան:

***Բնապահպանական դաստիարակություն*** *խնդիրները՝*

*Բնապահպանական դաստիրակության նպատակը դպրոցական աշակերտի էկո գիտակցության, մտածելակերպի, բնության հանդեպ հոգատարության ձևավորումն է: Աշակերտներին տալ բնապահպանական տարրական գիտելիքներ:*

*Կազմակերպել դիտումներ, էքսկուրսիաներ, արդյունքում սովորողը ձեռք կբերի անձնական փորձ, կկարողանա վերահսկել վարքը բնության մեջ՝ գիտակցելով բնության օգտակարությունը:*

***Դպրոց –ընտանիք կապը*** *Մշտապես կապ ստեղծել ծնողների հետ, հարգել նրանց, մասնակից դարձնել դպրոցում անցկացվող միջոցառումներին:*

## *ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ*

### ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ

| 1-ին կիսամյակ | | 2-րդ կիսամյակ | |
|---|---|---|---|
| Շաբաթվա օրը | Դասաժամը | Շաբաթվա օրը | դասաժամը |
| Երկուշաբթի | 6-րդ ժամ | | |

| Ուսումնական շաբաթներ | Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն | Կատարման ամսաթիվ | Կատարվել է |
|---|---|---|---|
| I | <<Բարև դպրոց>> թեմայով զրույց: | | |

| | | | |
|---|---|---|---|
| II | <<Իմ իրավունքներն ու պարտականությունները>> թեմայով քննարկում: | | |
| III | <<Ընկերներ>> թեմայով զրույց: | | |
| IV | Սիրում եմ քեզ, իմ Հայաստան: | | |
| V | <<Ոսկեծամիկ աշուն>> թեմայով զրույց: | | |
| VI | <<Ինչ է ազնվությունը>> թեմայով քննարկում: | | |
| VII | <<Իմ սիրած կենդանին>> թեմայով զրույց: | | |
| VIII | <<Խաղաղություն եմ ուզում>> թեմայով զրույց: | | |
| IX | <<Ով աշխատի, նա կուտի>> քննարկում: | | |
| X | <<Իմ երազանքը>> թեմայով զրույց: | | |
| XI | <<Բնության երևույթներ>> թեմայով զրույց: | | |
| XII | <<Սիրում եմ քեզ, իմ Երևան>> թեմայով զրույց: | | |
| XIII | <<Ձմեռող թռչուններ>> թեմայով զրույց: | | |
| XIV | <<Մանուկների սիրած եղանակը >> թեմայով զրույց: | | |
| XV | <<Ամանորյա հեքիաթ>> թեմայով զրույց: | | |
| XVI | <<Ինչպես պաշտպանվել երկրաշարժից>> թեմայով զրույց: | | |
| XVII | <<Իմ սիրած գույնը>> թեմայով զրույց: | | |
| XVIII | <<Դպրոցն իմ կյանքում>> թեմայով զրույց: | | |
| XIX | <<Իրավունքները մեր պաշտպաններն են>> թեմայով զրույց: | | |
| XX | <<Հայոց բանակ և հայ զինվոր>> թեմայով զրույց: | | |
| XXI | <<Զարմանահրաշ Երկիր մոլորակը>> թեմայեվ զրույց: | | |
| XXII | Հանդուրժողականության թեմայով զրույց: | | |
| XXIII | <<Մեծն Թումանյանի անմահ գործերը>> թեմայով զրույց: | | |
| XXIV | <<Իմ ամենա սիրելի գիրքը >> թեմայով զրույց: | | |
| XXV | <<Հայ մանկագիրների ստեղծագործությունները>> թեմայով զրույց: | | |
| XXVI | <<Բարեկենդան >>,<<Ծաղկազարդ>>,<<Զատիկ>> թեմայով զրույց: | | |
| XXVII | <<Մայրիկ, իմ անգին>> թեմայով զրույց: | | |
| XXVIII | <<Երթևեկության կանոնները>> թեմայով զրույց: | | |
| XXIX | <<Միջմշակութային փոխըմբռնում>> թեմայով զրույց: | | |
| XXX | <<Ինչպես հաղթահարել կոնֆլիկտները>> թեմայով քննարկում: | | |
| XXXI | <<Գարնան հմայքը>> թեմայով զրույց: | | |

| | | | |
|---|---|---|---|
| XXXII | <<Երեխաները պաշտպանված են>> թեմայով զրույց: | | |
| XXXIII | Միջմշակույթայինփոխըմբռնում.<<Կոկոյիճամփորդությունը>>: | | |